

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ  
«ՏԱՐՎԱ ԼԱՎԱԳՈՒՅՆ ԶԻՆՎՈՐՄԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ  
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՏԱԲԻ ՊԵՏ» ՄՐՑՈՒՅԹԸ  
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2012 թվականի մարտի 20-ի թիվ 194-Ն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի 2012 թվականի մարտի 26-ի թիվ 32-Ն, ՀՀ Պաշտպանության նախարարի 2012 թվականի ապրիլի 11-ի թիվ 323, ՀՀ ռստիկանության պետի 2012 թվականի մարտի 24-ի թիվ 5-Ն, ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի 2012 թվականի մարտի 21-ի թիվ 1-Ն, ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրենի 2012 թվականի ապրիլի 4-ի թիվ 1-Ն համատեղ հրամանով հաստատված «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթի անցկացման կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետը.

Կարգադրում եմ՝

1 ՀՀ Գեղարքունիքի մարզում «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթը կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Սաֆարյան Հ. – ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի վարիչ (Նախագահ)

Բազիկյան Տ. – կրթության, մշակույթի, սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ

Հակոբյան Գ. – ՀՀ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի վարիչ

Ափրեյան Խ. – Գավառի զինկոմիսարիատի հաշվառման և կցագրման գծով տեսուչ

Քոչարյան Ա. – ՀՀ ռստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության պետի կադրերի և անձնակազմի գծով տեղակալ, ռստիկանության գնդապետ

Կոստանյան Ա. – ՀՀ ԱԱԾ Գեղարքունիքի ՄՎ ավագ օպերիվազոր

2. Հանձնաժողովին (նախագահ Հ. Սաֆարյան) սահմանված կարգի համաձայն կազմակերպել և անցկացնել «Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ» մրցույթը և ներկայացնել տեղեկատվություն:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

